




ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍԽԱԼ ԵՎ ՄԵՐԺԵԼԻ

Սույն թվի սեպտեմբեր ամսի վերջերին Մայր Աթոռում ստացվեց 31 էջերից բաղկացած հայերեն լեզվով մի գրքույկ՝ «Նշումներ հոգևորականներու ամուսնության և կուսակրոնության մասին», որի հեղինակն է տ. Տիրան արք. Ներսիսյանը։ Գրքույկի վրա չեն նշված ո՛չ թվականը, ո՛չ էլ տպագրության վայրը։ Գրքույկը թարգմանությունն է հեղինակի անգլերեն լեզվով գրած համանուն գործի, որը լույս է տեսել հայերեն թարգմանությունից քիչ առաջ։

Խմբագրությունն տխրությամբ ծանոթացավ սույն գրքույկի բովանդակությանը։ Ասում ենք տխրությամբ, որովհետև այն գրվել է Նյու-Ճըրզիի (Նյու-Յորք) հայոց եկեղեցում, այս տարի փետրվար ամսին կատարված հայ մի վարդապետի ամուսնության ծանոթ պարագայի առնչությամբ։ Հայտնի է բոլորին, թե Ամենայն Հայոց Հայրապետը, խնդրանքովը Միացյալ Նահանգաց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արք. Մանուկյանի, 12 ապրիլ 1969 թվակիր հայրապետական իր վճռով՝ «Ոչ յօրինակ այլոց» բանաձևով հրահանգեց, որ դադարեն ամեն կարգի թեր ու դեմ հրապարակային արտահայտությունները, կատարված կանոնական խախտումի վերաբերյալ։ Վեհափառ Հայրապետը նույն ոգով հանդես եկավ նաև վերջին եպիսկոպոսաց ժողովում, հարցը փակված համարելով։

Գոհունակությամբ պետք է արձանագրել, թե բոլորը հարգեցին Հայրապետի հեղինակությունը, թե՛ եպիսկոպոսական դասը, թե՛ Միացյալ Նահանգաց վերջին թեմական պատգամավորական ժողովը և թե՛ հայ մամուլը։ Միմիայն տ. Տիրան արք. Ներսիսյանը չանցաց Հայրապետի հորդորին և հրապարակ հանեց վերոհիշյալ գրքույկը, անգլերեն և հայերեն լեզուներով։ Խմբագրությունն ևս իրեն թույլ չի տա անդրադառնալու Նյու-Ճըրզիում կատարված եկեղեցական խախտումին, սակայն անհրաժեշտ է համարում մի քանի ճշտումներ կատարել հրապարակված «ճշումներ»-ի վերաբերյալ, որովհետև հեղինակը փորձում է Նյու-Ճըրզիի եկեղեցում կատարված ակտը կանոնական համարել և այն ընդհանրացնել, և նույնիսկ ժխտել հայրապետական իշխանության իրավասությունը վճիռ տալու նման արարքի նկատմամբ։

Ա. Տ. Տիրան արքեպիսկոպոսը իր ամբողջ տրամաբանական կառույցը հիմնում է Անկյուրիայի ժողովի մի կանոնի և ս. Գրիգոր Լուսավորչին վերագրված մի այլ կանոնի յուրահատուկ մեկնաբանությանց վրա, եզրակացնելով թե՛

«Երբ վանական մը (սարկավագ կամ քահանա) կբաժնի և կհեռանա վանական կարգեն, լինի իր կամքով և կամ իր մեծավորին նախաձեռնությամբ, առանց սակայն կարգալուծ ըլլալու, այդ պարագային՝ անոր համար թեպետև ի գորու կմնա ամուսնության արգելքը, բայց ան պետք է ազատ արձակվի վանական իր ուխտեն» (էջ 9):

«Վանականին վանքեն զատված ըլլալու արարքն իսկ ինքնին զայն ազատ կկացուցանե իր վանական ուխտեն» (էջ 9):

«Առաջնորդ մը իրավունք ունի իր ուխտեն ազատ արձակելու նախկին վանական մը» (էջ 9):

«Եպիսկոպոս մը իրավունք ունի ի հարկին արձակելու հոգևորական մը իր կուսակրոնության պարտավորութենեն, մասնավոր կամ բացառիկ տնօրինությամբ մը»:

«Կաթողիկոս-Պատրիարքն իսկ չի կրնար առաջին առիթին վճիռներ տալ այսպիսի պարագաներուն» (էջ 15):

Ուրեմն, ըստ հեղինակի, կուսակրոն քահանան (աբեղա, վարդապետ) կարող է ամուսնանալ, մի եպիսկոպոսի արտոնությամբ, որի իշխանության ներքև է անցել նա, վանքից հեռանալուց հետո:

Նախ պետք է ասել, թե Անկյուրիայի ժողովից մեջքերված կանոնը բավարար հիմք չի տալիս նման մեկնաբանությանց և ընդհանրացումների հանգեղու, որովհետև կան նաև հակառակ իմաստով կանոններ, որոնք ակնարկում է նաև Տիրան արքեպիսկոպոսը ևս: Օրինակ՝ Երկրորդ Առաքելական կամ «Կանոնք Կղեմայ» կանոնախմբի ԻԴ հնագույն կանոնը ասում է. «Դեռ չամուսնացած ժառանգավորության (կուսակրոնության) մեջ մտածներից, ամուսնանալ ցանկացողներից հրամայում ենք ամուսնանալ միայն գրականության և սաղմոսասացներից» («Կանոնագիրք հայոց», ԻԴ կանոն, էջ 80): Այս պետք է ճշտել, թե Անկյուրիայի հիշյալ ժողովը, որը տեղի է ունեցել 314—315 թթ., տեղական մի ժողով է, որը չունի տիեզերական ժողովի հեղինակություն, և որին հայ եկեղեցին չի մասնակցել, թեև քրիստոնեական եկեղեցիների կողմից համարվում է տեղական օրինավոր ժողովներից մին:

Կարևոր է նշել, թե զուտ տեղական բնույթ ունեցող այդ ժողովի կանոնները առնչվում են Դ դարի սկիզբներում տեղի ունեցած պատմական բացառիկ իրադրությանց հետ: Անկյուրիայի ժողովը նկատի է ունեցել Դիոկղետիանոս կայսեր հալածանքների առիթով կատարված ուրացումները և ապաշխարությամբ եկեղեցու գիրկը դարձողների պարագան:

Առավել կարևորն այն է, սակայն, թե ոչ մի քրիստոնեական պատմական եկեղեցի չի գործադրում Անկյուրիայի ժողովի հիշյալ կանոնը ցույց տալով մեկնաբանությամբ, ո՛չ արևելքում, ո՛չ արևմուտքում:

Ինչպե՞ս կարելի է խորհել, թե հայ եկեղեցու, օրթոդոքս եկեղեցիների և կաթոլիկ եկեղեցու հայրերը, վարդապետներն ու աստվածաբանները տաալնվեց դարեր շարունակ գլխի չեն ընկել ու չեն կարողացել հայտնաբերել Տիրան արքեպիսկոպոսի մեկնաբանությունը ու եպիսկոպոսներին չեն տվել և այսօր էլ չեն տալիս նման արտոնություն: Միմիայն այս պարզ ու հստակ իրողությունը բավարար հիմունք է որևէ ռոջմիտ մարդու համար, հաստատելու Տիրան արքեպիսկոպոսի մեկնաբանությանց շիտոթ:

Բ. Հայտնի է, թե պատմական զարգացման ընթացք է ապրել կուսակրոն քահանայության դրությունը: Գ և Դ դարերում բոլորովին ա՛յլ էր ըմբռնումը և իրադրությունը եկեղեցու մեջ, ամեն տեղ, թե՛ արևմուտքում և թե՛ արևել-

քում: Միայն Դ դարի վերջերից և մանավանդ Ե դարում է, որ ցվիրագործվում է կուսակրոնության կարգը եկեղեցու հոգևոր պաշտոնյաների, այսինքն՝ եպիսկոպոսի և քահանայի և սարկավագի նկատմամբ: Փոքր Ասիայի մեջ կուսակրոն վանականների դրությունը սկիզբ է առնում Սեբաստիայի եպիսկոպոս Եվստատեոսի օրոք, 350 թվականից հետո, ապա տարածվում է Մեծն Բարսեղի, Կապադովկիայի միտրոպոլիտի օրով, Դ դարի վերջերին: Ե դարում է, որ կուսակրոնությունը դառնում է ընդհանուր դրություն թե՛ արևելքի և թե՛ արևմուտքի համար: Արևմուտքը ավելի արմատական է լինում, կուսակրոնության կանոնը անխախտորեն պարտադիր դարձնելով բոլոր հոգևորական աստիճանների համար (385-ին՝ Հռոմի Սիրիկիոս եպիսկոպոսի (Պապի) և 450-ին Հռոմի Լևոն Ա եպիսկոպոսի (Պապի) կանոնական վճիռներով): Միևնույն արևելքը պահում է միաժամանակ նաև ամուսնացյալ քահանայության դրությունը:

Որով Տիրան արքեպիսկոպոսի հիշած մեկ-երկու կանոնները Դ դարի սկիզբներից, հետագա զարգացումներով և վերջնապես հաստատված կանոնական դրություններով՝ դարձել են և մնացել՝ ժամանցված, այսինքն չգործադրված կանոններ, Ե դարից սկսած մինչև մեր օրերը:

Գ. Ընդհանուր եկեղեցու պատմության մեջ Դ դարից սկսած, բացի տիեզերական ժողովներից, բազմաթիվ տեղական ժողովներ են եղել, թե՛ արեւելքում, թե՛ արևմուտքում, և բազմապիսի կանոններ հաստատվել: Հետագային այդ կանոններից ոմանք վերափոխվել են, ժամանցվել են, անգործածելի են դարձել և կամ ժխտվել: Մի ամբողջ պատմություն կարելի է գրել այդ մասին:

Այդ իսկ պատճառով, օրթոդոքս եկեղեցիները (հույն, ռուս, ռումին և այլն) ինչպես և հռոմեական կաթոլիկ եկեղեցին, ունեն իրենց հատկորեն կազմված կանոնագրքերը, որտեղ դասավորված կերպով արձանագրված են բազմահարյուր հին կանոններից քաղված այն կանոնները, որոնք ի գործու են համարվել, գործադրելի և պարտադիր, տվյալ եկեղեցու համար:

Տ. Տիրան արքեպիսկոպոսը մոռանում է, որ Հայաստանյայց եկեղեցին նման կանոնագիրք չունի այսօր, և շատ վաղուց է, որ չունի: Վերջերս Երեւանում լույս տեսած «Կանոնագիրք հայոց»-ը, ինչպես և Մելիք-Թանգյանի «Հայոց եկեղեցական իրավունքը» իրականում պարզապես կանոնների հավաքածուներ են՝ քաղված հին ձեռագրերից: Այս պայմանների մեջ ինչպե՞ս կարելի է հայտարարել՝ «կանոնը ասում է», այն էլ Դ դարի սկիզբներից տեղական բնույթ կրող ոչ հայկական մի ժողովի՝ շատ վաղուց ժամանցված մի քանի կանոնների մասին:

Երևանում հրատարակված «Կանոնագիրք հայոց» հավաքածուն թղթատող որևէ ընթերցող կարող է նկատել, թե այնտեղ կան շատ կանոններ, որոնք վաղուց դադարել են գործադրելի լինելուց, և նաև այնպիսիներ, որոնք միմյանց հակասում են: Բերենք մի քանի օրինակներ:

1. «Եթե եպիսկոպոսը կամ երեցը և կամ յարկավազը պատարագի ժամանակ չհաղորդվեն, պատճառը թող ասեն, ապա թե ոչ՝ թող մերժվեն եկեղեցուց» (Ը կանոն, էջ 76—77):

2. «Տարվա մեջ երկու անգամ եպիսկոպոսական ժողով լինի» (ԼԵ կանոն, էջ 84):

3. «Հրեայի կամ հեթանոսի հետ հարաբերություն ունեցողը, մերժվի եկեղեցուց» (Է կանոն, էջ 76, ԽԴ կանոն, էջ 87, ԿԵ կանոն, էջ 92):

4. «Մեծ պահքը չպահող եպիսկոպոսը կամ քահանան կարգալուծ լինեն» (ԿԴ կանոն, էջ 92):

5. «Վայելու է որ աշխարհի բոլոր եպիսկոպոսների համաձայնությամբ, առաջնորդ-եպիսկոպոս ճշանակվի» (Դ կանոն, էջ 119, Զ կանոն, էջ 120):

6. «Ալեքսանդրիայի, Անտիոքի, Հռոմի եպիսկոպոսները թող իշխանություն ունենան ամբողջ եկեղեցու վրա» (Զ կանոն, էջ 120):

7. «Եպիսկոպոսը ձեռնադրվի երկու կամ երեք եպիսկոպոսներից» (Ա կանոն, էջ 75):

8. «Իր արգանդի պտուղը ոչնչացնող կինը 10 տարի ապաշխարի» (Գ կանոն, էջ 170):

9. «Քահանան ձեռնադրվի 30 տարեկան հասակում» (ԺԶ կանոն, էջ 186), և այլն:

Այդ դժբախտաբար մեր եկեղեցին իր կանոնագիրքը չունի մինչև այսօր: Սպասելի էր, որ մեր եկեղեցական իշխանությունները այդ կարևոր գործին ձեռնարկած լինեին գեթ վերջին հարյուր-հարյուրհիսուն տարիների ընթացքում, երբ Արևելահայաստանում «Պոլոժենիա»-ով և Արևմտահայաստանում «Ազգային սահմանադրությամբ» հայ եկեղեցին, մեր ժողովրդի հետ միասին, ազգային զարթոնք ապրեց:

Այսօր մենք բարի նախանձով պետք է նայենք մեր օրթոդոքս և կաթոլիկ բույր եկեղեցիներին, որոնք իրենց օրինավորապես և ժողովականորեն կազմելով կանոնագրքերը ունեն, որտեղ կարելի է գտնել ուզածդ հստակ կանոնը որևէ եկեղեցական հարցի վերաբերյալ: Այդ կանոնագրքերը ժամանակ առ ժամանակ վերանայվում են, փոփոխություններ են կրում կամ նրանց մեջ լրացումներ են կատարվում:

Այսպես օրինակ, վերջերս, հոկտեմբեր ամսում, Հռոմում տեղի ունեցած եպիսկոպոսաց արտակարգ սինոդը որոշեց վերաքննության ենթարկել հոռմենական-կաթոլիկ եկեղեցու արդի կանոնագիրքը:

Մեր եկեղեցու առաջ դրված սեպուհ խնդիրներից մեկն է կազմել Հայաստանյայց եկեղեցու կանոնագիրքը, քաղված հին կանոնների հավաքածուից, կարգավորված, դասավորված և ներդաշնակ մի ամբողջի վերածված, դուրս թողնելով ժամանցված, անգործադրելի և ժամանակավրեպ կանոնները, հաշվի առնելով մեր եկեղեցու և ժողովրդի հոգևոր-եկեղեցական և վարչակազմակերպչական կյանքի արդի պայմանները:

Մինչ այդ, մենք ամենայն աշխրջությամբ պետք է պահպանենք այն կանոնական կարգը, որ նվիրագործվել է դարերի փորձով, տիեզերական երեք ժողովներով, հայ եկեղեցու կարևոր պատմական ժողովներով և ավանդությամբ: Այլապես, եթե կանոնների հավաքածուից մի «կանոն» հիմք առնենք և յուրովի մեկնաբանենք, կարող կլինենք ամեն ինչ ապացուցել և շփոթություն և քառս ստեղծել մեր շուրջ:

Օգտագործեցինք «դարերի փորձով նվիրագործված» և «ավանդությամբ» հասկացությունները, որոնք մենք վճռական լինելու չափ կարևոր ենք համարում: Տրված լինելով, որ մեր եկեղեցին չունի այսօր իրական մի կանոնագիրք, երբ հարկին ներքև ենք գտնվում՝ հին մի կանոնի վավերականությունն և գործադրելիությունը ճշտելու, պետք է դիմենք մեր եկեղեցու դարերի փորձով նվիրագործված կարգին ու ավանդության:

Դ. Մխարկում է տ. Տիրան սրբազանը, հեգնանքի արժանի դարձնելով ավանդություն հասկացությունը, երբ այն բնորոշում է իբրև «թանձր մշուշ»

(էջ 15): Այդ ոչ միայն հակակրոնական և հակաեկեղեցագիտական է, այլ առհասարակ հակագիտական: Ներելի չէ մի հոգևորական մտածողի՝ մերժել և հեգնել **ավանդություն** հասկացությունը: Արևելքի և արևմուտքի բոլոր պատմական եկեղեցիները իրենց աստվածաբանական ուսմունքով և նվիրապետական կարգով, հիմնված են նաև ավանդության վեմին վրա: Ավանդություններ կան, որոնք երբեմն ավելի գորավոր ու անշարժելի են, քան կանոններն ու օրենքներն իսկ. ավանդություններ կան, որոնք կանոն կքանդեն և կան, որ կանոն կշինեն: Ծանոթ և տարրական ճշմարտություններ են սրանք:

Պողոս առաքյալը Տիմոթեոսին պատվիրում է «պինդ պահել աւանդութիւնը» (Բ Տիմ. Ա 12—15, Ա Կորնթ. ԺԱ 2, Բ Թեսալ, Բ 14—15):

Տերտուլիանոսը, եկեղեցական ճշմանավոր հայրը, Բ դար, վկայում է. «Եթե որևէ եկեղեցական մի կանոն գրավոր կերպով չի որոշված, քայց ամեն տեղ պահվում է, ճշմանկում է, որ այդ հաստատված է սովորությամբ, հիմնված ավանդության վրա: Եթե մեկը ասի որ, ավանդության համար էլ պետք է որևէ մի գրավոր վկայություն, այն ժամանակ մենք մեր կողմից ցույց կտանք բազում կարգեր, որոնք առանց որևէ գրության, լոկ ավանդության հեղինակության շնորհիվ և սովորության ուժով պահպանված են»:

«Եթե առաքյալները,—գրում է ս. Իրենիոս Հայրապետը, Բ դար,—թողած չլինեին մեզ գրություններ, մի՞թե պիտի չհետևեինք այն ավանդության կարգին, որ տրված է նրանց, որոնց հանձնված են եկեղեցիները»:

Ս. Բարսեղ գրել է այս մասին. «Եթե սկսենք մերժել անգիր սովորությունները, իբրև մեծ ուժ չունեցող, այն ժամանակ աննկատելի կերպով կվրձասենք Ավետարանին, նրա գլխավոր մասերի մեջ»:

«Եկեղեցական պատմությունը երբ ավելի հաստատուն փաստեր չգտներ, կգոհանա, առավելագույն հավանականության փաստերով, ավանդությանց վրա հիմնված պատճառաբանություններով և շարունակությամբ հաստատված եղելություններով» (Օրմանյան, «Հայոց եկեղեցի», Կ. Պոլիս, 1912 թ., էջ 19):

Տիրան սրբազան ավանդություն հասկացությունը ժխտելով, չի նկատում սակայն, թե լուրջ հակասության մեջ է գտնվում իր իսկ հայտնած մեկ ուրիշ տեսության հետ: Այսպես, հեղինակը զարգացնում է այն միտքը, թե «որևէ ընկերության հորինվածքին մեջ հառաջ եկած փոփոխությունները սկիզբ չեն առնել իշխանության բարձր աթոռներում վրա բազմած օրենսդիրներու հախաձեռնությամբ: Այդ ընթացքով չէ որ տեղի կունենա եղափոխությունը մարդկային հաստատություններում մեջ: Փոփոխությունները հառաջ կու գան իբրև հետևանք այն ճնշումներում, որ կըլլան վարեն՝ արմատի ուժերն, այսինքն ժողովուրդեն, որ իր ամենօրյա ապրումներում մեջ փորձառությամբ կզգա տիրող օրենքներում և սովորություններում անբավականությունը: Ասիկա է այն ժայռը որում վրա հիմնված է ժողովրդավարության սկզբունքը» (էջ 16): Տիրան սրբազանի այս հեղափոխական տեսության մենք առարկություն չունենք, եթե խոսքը վերաբերի «մարդկային հաստատություններում», ինչպես ինք էլ նշում է արդեն: Սակայն, արդյոք ուղի՞ղ է և ընդունելի՞ նման ընկերաքաղաքական տեսություն, ամբողջապես կիրառելի համարել հոգևոր-եկեղեցական կյանքի և կանոնական դրության:

Եվ մյուս կողմից, ի՞նչ են ավանդությունները և պատմականորեն նվիրագործված դրությունները, եթե ոչ՝ հաստատված և թանձրացած մտայնություններ, վիճակներ, հարաբերություններ, իբրև հետևանք այն ձգտումներին, այն երևույթներին, որ «կըլլան վարեն՝ արմատի ուժերն, այսինքն ժողովուրդեն, որ իր ամենօրյա ապրումներում մեջ փորձառությամբ կզգա տիրող օրենքն»:

րու և սովորություններու անբավականությունը»: Ժիշտ աչապես կազմավորված ու կյանքի են կոչված մասնավորությունները, որոնք երբեք «սկիզբ չեն առնել իշխանության բարձր պոռոներում վրա բազմած օրենսդիրներու նախաձեռնությամբ», ինչպես պիտի ստեր Տիրան սրբազանը: Ահա հակասությունը, որի մեջ է գտնվում հեղինակը, որի ըմբռնումը **ավանդություն** հասկացության մասին, հատկապես կրոնական-եկեղեցական տեսակետից, սխալ է և հակազիտական:

Ե. Գրքույկի հեղինակը ո՛չ միշտ է ներկայացնում մասն Գևորգ Զ կաթողիկոսի օրով տեղի ունեցած շեղումները կուսակրոնության կանոնից, նույնիսկ դրանք նախընթացներ: Ժիշտ է, թե մեզ մեկ-երկու շեղումներ տեղի են ունեցել հանգուցյալ կաթողիկոսի օրոք, սակայն, դրանք հայրապետական բացառիկ տնօրինությամբ համարվել են ներված խախտումներ՝ «ոչ յօրինակ այլոց» բանաձևով: Այդպես տնօրինեց մասն Տ. Վազգեն Ա կաթողիկոսը, Նյու-Ճրքգիի կանոնական խախտումի պարագային:

«Ոչ յօրինակ այլոց» բանաձևը կարելի չէ նախընթաց նկատել կամ կանոնից շեղվելու արտոնություն. այլ **եղածը ներել ու՝ հաստատել՝ կանոնը**:

Զ. Տիրան արքեպիսկոպոսը իրեն հատուկ տրամաբանությամբ հասնում է մինչև այնտեղ, որ ժխտում է Հայոց ընդհանրական Հայրապետի իշխանության նկարագիրն ու սահմանները: Բոլորովին անհիմն կերպով ասում է՝ «կաթողիկոսը նախ և առաջ եպիսկոպոս է Երևանի թեմին» (էջ 17) և հանգում է այն եզրակացության, թե Նրա իշխանությունն ու իրավասությունները իբր թե հավասարապես չեն տարածվում բոլոր թեմերի վրա, այլ յուրաքանչյուրի նկատմամբ հատուկ իրավասություններով:

Տիրան սրբազանն ասում է. «Պետք է գիտնալ որ Էջմիածնի կաթողիկոսը որոշապես երեք տարբեր հանգամանքներ կամ պաշտոններ ունի, յուրաքանչյուրն իր հատուկ իրավասություններով» (էջ 17) և շարունակում է իր խոսքը այնպիսի ձևով, որ միամիտ ընթերցողը կարող է տպավորվել, թե Էջմիածնում մի կաթողիկոս կա, որ նախ և առաջ առաջնորդն է «Երևանի թեմին»-ն լրիվ իրավասություններով. հետո Նա ներքին թեմերի վրա որոշ հավելյալ իրավասություններ ունի, և հետո է, որ «Էջմիածնի Գահակալը», «Պատրիարք-կաթողիկոս է Ամենայն Հայոց բովանդակ աշխարհի» (էջ 18):

Պատմական իրողությունն այն է պարզապես, թե եկեղեցիները ի սկզբանե իրենց այսօրվա կազմակերպչական նվիրապետական կառույցը չեն ունեցել:

Եղել են նախ եկեղեցական համայնքներ, տեսուչներով (եպիսկոպոս) ու երեցներով: Ապա ժամանակի ընթացքում եկեղեցիները կազմավորվել և համախմբվել են որոշ եպիսկոպոսների Աթոռների շուրջ (հատկապես մայրաքաղաքի եպիսկոպոսների), դրանք համարելով կենտրոն տվյալ մի երկրի կամ մի երկրամասի վրա գործող եպիսկոպոսական շրջանների (թեմերի): Այդ եպիսկոպոսները ապա կոչվել են նախ միտրոպոլիտներ (մայրաքաղաքների եպիսկոպոսներ) և ապա պատրիարքներ: Մոտավորապես այսպես հառաջ են եկել ու պատմականորեն զարգացել բոլոր այսօրվա պատրիարքական, կաթողիկոսական Աթոռները:

Հայտնի է, թե Գ. և Դ. դարերում ըմբռնումը՝ եպիսկոպոսի, միտրոպոլիտի և պատրիարքի և նրանց եկեղեցական պաշտոնների և երկրամասային (տերիտորիալ) իրավասության սահմանների մասին, չի համապատասխանում հետագա դարերի վերջնական ըմբռնումին և իրավիճակին:

Դ. դարի սկիզբներում, երբ տեղի ունեցավ Անկյուրիայի տեղական բնույթ կրող ժողովը, տակավին վերջնապես չէր կազմավորվել եկեղեցու նվիրապետական կարգը, չէին բյուրեղացել՝ եպիսկոպոս, միտրոպոլիտ, պատրիարք հասկացությունները և նրանց իրավասությունների բնույթն ու սահմանները:

Ե դարի կեսերին միայն, Քաղկեդոնի ժողովի նախօրյակին, իբրև հետևյալն Կատմական երկար զարգացումների և ներքին պայքարների, վերջնապես կազմավորվում և հաստատվում են նվիրապետական դրությունները, համապատասխան իրավասություններով և իշխանության սահմաններով, կանոնական հեղինակությամբ:

Այսպես, Ե դարում է, որ Հռոմի, Անտիոքի և Ալեքսանդրիայի եպիսկոպոսները կոչվում են և իրավապես ճանաչվում իբրև միտրոպոլիտներ (ապա պատրիարքներ) և ավելի ուշ Կ. Պոլսի և Երուսաղեմի եպիսկոպոսները, որպես միտրոպոլիտներ (ապա պատրիարքներ): Նույնիսկ դրանից հետո էլ վեճերը շարունակվում են մինչև Է դար: Միայն Զ դարում է, որ Կ. Պոլսի պատրիարքը ստանում է տիեզերական պատրիարքի տիտղոսը:

Որով հոռմեական-կաթոլիկ եկեղեցու գլուխը՝ Պապը, ի սկզբանե եղել է Հռոմի եպիսկոպոս, և մինչև այսօր էլ պահում է այդ տիտղոսը իբրև պատմական իր տիտղոսներից մեկը: Ռուսաց օրթոդոքս եկեղեցու պատրիարքը կոչվում է «Մոսկվայի և համայն Ռուսիայի Պատրիարք»: Վրաց կաթողիկոսը համարվում է նաև Սուխումիի թեմի միտրոպոլիտ: Ռումինիայի պատրիարքը՝ նաև «Բուխարեստի արքեպիսկոպոս» և այլն: Բայց այս բոլոր տիտղոսները ոչ մեկ չափով չեն նվազեցնում հիշյալ զահակալների հայրապետական ամբողջական, լիիրավ իշխանությունը իրենց եկեղեցիների վրա:

Հետևաբար, նույնիսկ եթե Ամենայն Հայոց Հայրապետը լիներ նաև «Երեւանի եպիսկոպոս», այդ պարագան որևէ հիմք չէր ներկայացնում Տիրան արքազանի պաշտպանած տեսակետին ի նպաստ: Սակայն հայ եկեղեցու և Հայոց կաթողիկոսի պարագային հիմնովին սխալ են Տիրան արքեպիսկոպոսի ասածները: Նախ պետք է հաստատել, թե հայ եկեղեցու և նրա նվիրապետության կազմավորման շրջանում և հետագա բազում դարերի ընթացքում, Ամենայն Հայոց կաթողիկոսը երբեք չի եղել և չի համարվել «Երևանի եպիսկոպոս»: Տիրան արքեպիսկոպոսը չի կարող ցույց տալ որևէ կանոն, որևէ հիշատակություն, որևէ արձանագրություն, որևէ պատմական փաստաթուղթ, որտեղ Հայոց Հայրապետը կոչվեր կամ հիշատակվեր որպես «Երեւանի եպիսկոպոս»: Եվ չէր էլ կարող այդ լինել. որովհետև հնում Երևանը Հայաստանի մայրաքաղաք չի եղել երբեք: Եթե Հայոց Հայրապետը Հայաստանի մայրաքաղաքի անունով պիտի հիշվեր (ինչպես Հռոմի, Կ. Պոլսի եպիսկոպոսները), այդ պարագայում Նա պետք է հիշված լիներ Վաղարշապատի կամ Դվինի կամ Անիի եպիսկոպոս: Բայց այդ էլ չի եղել երբեք: Ամենայն Հայոց Հայրապետը ի սկզբանե եղել է «Հայոց Մեծաց», այսինքն Մեծ Հայաստանի եպիսկոպոս: Մեր քույր եկեղեցիները իրենց հայսմավորներում հնուց ի վեր ա. Գրիգոր Լուսավորիչը կոչում են Մեծ Հայաստանի եպիսկոպոս կամ Հայրապետ:

Հայ եկեղեցին Դ դարից իսկ ճանաչվեց ինքնագլուխ եկեղեցի, իր միակ Գլուխը ունենալով Էջմիածնի Աթոռի եպիսկոպոսապետը կամ Հայրապետը:

Օրմանյան արքազանը վկայում է. «Ս. Լուսավորչի մահվան 32 տարի ետք, Մեծն Ներսեսի օրով, 364-ին որոշեցին Հայք թե Հայոց Աթոռն ինքնագլուխ և լանկախ Հայրապետություն է և ուրիշ պատրիարքության ենթարկյալ չէ. հայ

եպիսկոպոսաց գլուխը պարտավոր չէ Կեսարիո Աթոռեն ձեռնադրություն անույլ և նախընթաց սովորությունը խախտելուցով բոլորովին» (Օրմանյան, «Աթոռ Հայաստանյայց», էջ 31):

Դ դարի եկեղեցական պատմիչ Եվսեբիոս Կեսարացին վկայում է՝ «Այնուսիկ որք էին ի Հայաստան, որոց յայնժամ եպիսկոպոս էր Մեհրութան»։ Նույնը վկայում է նաև Օրմանյանը Մեհրութանի մասին, իբրև Հայոց Մեծաց, այսինքն Մեծ Հայաստանի եպիսկոպոս։

Նիկիայի (325 թվին) ժողովին ս. Արիստակեսը մասնակցել է որպես ներկայացուցիչ Հայաստանի եկեղեցու։ Եվ ժողովին ներկա եպիսկոպոսների շարքում նա հիշատակվում է «Արիստակես Հայոց» («Կանոնագիրք հայոց», էջ 133—141):

Այնուհետև, հաջորդ դարերում հայոց հայրապետները «կամօքն Աստուծոյ և ընտրութեամբ համօրէն ազգիս հայոց կոչեցեալ են յԱրարատեանս Աթոռ կաթողիկոսութեան Ամենայն Հայոց» (Կանոն ձեռնադրութեան Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Վաղարշապատ, 1876, էջ 4):

Այստեղ «յԱրարատեանս Աթոռ կաթողիկոսութեան Ամենայն Հայոց»-ը պարզ է, թե որևէ կապ չունի «թեմ» գաղափարի հետ, այլ երկրի, Արարատյան աշխարհի։ Միջանկյալ ասենք, թե՝ «Երևանի թեմ» անունը գործածվեց 1836-ից հետո, իբրև հետևանք ցարական իշխանության (Պոլոժենիաւով) հաստատած վարչական բաժանումների, ըստ որում Արևելյան Հայաստանը կոչվեց «Երևանի և Նախիջևանի նահանգ» Ռուսաստանի, և «Երևանի թեմ»-ը համարվեց «Հայրապետական թեմ»։

Այսօր էլ պահում ենք «Հայրապետական թեմ» պատվավոր տիտղոսը ի պատիվ մեր հայրենիքի նոր մայրաքաղաքի։ Սակայն այս բոլորը ոչ մի կապ չունեն Հայոց Հայրապետի կանոնական-պատմական տիտղոսի և նրա իրավասությանը բնույթի և սահմանների հետ։

Է. Բոլորովին անհիմն է Տիրան արքեպիսկոպոսի նորելուկ տեսությունը «Էջմիածնի կաթողիկոս»-ի մի տեսակ երկրորդ աստիճանի իրավասությունների մասին, որոնք ըստ հեղինակի վերապահված են Արարատյան թեմից դուրս, Խորհրդային Միության մեջ գործող մյուս թեմերին։ Այսինքն, ըստ Տիրան արքեպիսկոպոսի՝ Վրաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի հայոց թեմերը մի երկրորդ դաս են կազմում «Էջմիածնի կաթողիկոս»-ի իշխանության և իրավասությունների տեսակետից, իսկ արտասահմանի թեմերը՝ մի երրորդ դաս։

Ուղիղ դատողություններ չեն սրանք և վնասաբեր են մեր եկեղեցու միության։ Տիրան արքեպիսկոպոսը ակամայից հանդիսանում է Հայոց ընդհանրական Հայրապետության հեղինակությունը տկարացնող, կենտրոնախույս ոգու սերմնացան։

Բազմադարյան իրողությունն այն է, թե ս. Գրիգոր Լուսավորչի օրերից գոնե հալ եկեղեցին եղել է և մնացել՝ մի նվիրապետական մարմին և մի ժողովուրդ, իր գլուխը ունենալով մի Հայրապետ, մի Եպիսկոպոսապետ, որ Ժ դարից ստացել է նաև կաթողիկոս Ամենայն Հայոց տիտղոսը և այդպես էլ նվիրագործվել, պահելով նաև հին տիտղոսները, իբրև պատմական հիշատակներ։

Եվ երբ մի որևէ այլ եպիսկոպոս փորձել է իր եպիսկոպոսական իշխանությամբ չենթարկվել Եպիսկոպոսապետին, Հայոց կաթողիկոսին, նա կար-

գի է հրավիրվել կամ պատժվել, իսկ կաթողիկոսի իշխանության հակադրվողները նկատվել են հակաթոռներ:

Հիշենք մի քանի հին կանոններ կաթողիկոսի և եպիսկոպոսի իշխանության մասին:

«Կաթողիկոսը դետ և գլուխ և օրենսդիր լինի ժողովուրդին, նրա խոսքը վերջնական լինի վիճելի բոլոր հարցերում, ինչպես Մովսեսինը և Ահարոնինը» (Կանոնագիրք, Զ կանոն, էջ 31—32, Դ կանոն, էջ 119, Զ կանոն, էջ 121, Դ կանոն, էջ 159):

«Թեմի եպիսկոպոսը պիտի ղեկավարի իր վիճակը և իրեն ենթակա տեղերը: Իսկ մնացած խնդիրներում ոչինչ պետք չէ անի առանց Գլխավոր Եպիսկոպոսի» (Կանոնագիրք, ԼԲ կանոն, էջ 83—84, Թ կանոն, էջ 210):

Հայ եկեղեցու բոլոր թեմերում անխտիր, կաթողիկոսական իշխանության և իրավասության տեսակետից, չկա ոչ մի տարբերություն, ոչ մի աստիճանավորում: Ամենայն Հայոց կաթողիկոսը լիակատար և ամբողջական իշխանություն ունի թե՛ Արարատյան թեմի, թե՛ Խորհրդային Միության թեմերի և թե՛ արտասահմանի թեմերի վրա, հավասարապես այժմ և միշտ:

Ոչ ոք թող չշփոթվի, ոչ ոք թող չթափառի, ոչ ոք թող չսալթաքի:

Ը. Կարևոր մի պարագա ևս, որը Տիրան արքեպիսկոպոսին դնում է մի այլ հակասության մեջ: Սրբազանը կուսակրոնության ուխտի և մի եպիսկոպոսի կողմից այդ ուխտը քակելու իրավասության իր տեսությանց մասին խոսելուց հետո, շարունակում է՝

«Բաց աստի միշտ պետք է հիշենք որ քրիստոնյա եկեղեցիներու շարքին կղզիացած աղանդ մը չենք մենք: Մենք կպատկանինք Արևելյան ողորդափառ եկեղեցիներու ընտանիքին: ...Հետևաբար բացարձակ անհրաժեշտություն է որ շարունակ մայինք մեր շուրջ և տեսնենք թե բարեշրջությունը ինչ ընթացք կառնե մեր քույր եկեղեցիներու մեջ», ...«թեպետ չունինք պաշտոնական մեքենականությունը որ համակարգե մեր և անոնց ջանքերը, այնուհանդերձ պետք է դիտենք և սորվինք անոնց փորձառությունեն և զգույշ պետք է ըլլանք տիրող օրինաչափություններեն չհեռանալու» և այլն (էջ 26 և 27):

Այստեղ, այդ, ողջմտությունն է խոսողը: Սակայն չի՞ նկատում Տիրան սրբազանը հակասությունը, որի մեջ է գտնվում: Այս տողերը ոչ միայն հակասում են սրբազանի շարադրած տեսությանց, այլ նույնիսկ մի տեսակ մեղադրանք են հանդիսանում նրանց դեմ:

Իրոք, արդար է և բացարձակ անհրաժեշտություն, որ «հիշենք թե քրիստոնյա եկեղեցիներու շարքին կղզիացած աղանդ մը չենք», հիշենք թե «կրպատկանինք Արևելեան պատմական եկեղեցիներու ընտանիքին», հիշենք «թե պետք է մայինք մեր շուրջ և տեսնենք թե ինչ ընթացք կառնե բարեշրջությունը մեր քույր եկեղեցիներուն մեջ»:

Մեր քույր եկեղեցիներից ո՞ր մեկը Անկյուրիայի ժողովի կանոններն է ընդունում և մեկնաբանում այնպես, ինչպես Տիրան արքեպիսկոպոսը: Մեր քույր եկեղեցիներից ո՞ր մեկը երբևիցե արտոնած է կամ արտոնում է, որ մի եպիսկոպոս իր իշխանությամբ քակի կուսակրոնության ուխտը և կուսակրոն քահանան դարձնի ամուսնացյալ քահանա, և այդ վավերական և ընդունելի նկատվի:

Տիրան սրբազանը չի կարող ոչ իսկ մի օրինակ ցույց տալ մվիրապետական կարգ ունեցած մեր քույր եկեղեցիների կյանքից, որոնք ցարդ ամուր պահպանում են կուսակրոնության կարգի ավանդական դրությունը:

Վերջացնելուց առաջ, կրկնում ենք, մեր սույն գրությունը չի վերաբերում Նյու-Ճրքզիի եկեղեցում կատարված խախտումին, այլ միմիայն Տիրան արքեպիսկոպոսի հիշյալ հրատարակության **ոգում**, նրա փաստարկման **կերպին** ու **եզրակացությանց**, որոնք համարում ենք սխալ և մերժելի, և չենք էլ ցանկանում, որ Տիրան արքեպիսկոպոսի այս գրքույկի առիթով վեճերը շարունակվեն:

Նույնպես այս գրությունը մեր եկեղեցու կուսակրոնության դրության վերաբերյալ դիրք ճշտելու բնույթը չունի: Այդ առանձին հարց է և ապագայի խնդիր է: **Ավանդական կարգը վերաքննության ենթարկելը** և, ի հարկին, **որոշ բարեփոխումներ ընդունելը**, վերաբերվում է եկեղեցու օրինավոր և պաշտոնական իշխանությանը՝ եպիսկոպոսաց ժողովին, Ամենայն Հայոց կաթողիկոսին և ազգային-եկեղեցական ժողովին:

Մենք մի փոքրիկ եկեղեցի ենք, աշխարհի վրա ցիր ու ցան մեր ժողովրդի հետ միասին, մի եկեղեցի տկար իր ներկա հոգևորականների համրանքով և որակով, մի եկեղեցի, որը գտնվում է դժվարությունների և ներքին պառակտումների վտանգի առաջ: Իրաց այս կացությանց մեջ, արդյոք այժմեակա՞ն է զբաղվել անկյուրիական կանոններով:

Բարեբախտաբար, ունենք հավատավոր, ողջամիտ և ավանդապահ, այո, **ավանդապահ** մի ժողովուրդ, և ի Հայաստան և ի տիրու աշխարհի, որ ճշմարիտ ու ապահով ժայռն է, որին վրա կանգնած է մեր սուրբ եկեղեցին իր նվիրապետական կարգով և Ամենայն Հայոց Հայրապետությամբ:

Հայ ժողովուրդը սպասում է իր հոգևոր սպասավորներից կենդանի Ավետարան, շինարար գործ, ներքին միության ամրապնդում, Մայր Աթոռ ս. Էջմիածնի հեղինակության զորացում:

Ինչքան հուզիչ է և այժմեական հնչում, եպիսկոպոսաց ժողովում մեր Հայրապետի բացման խոսքի վերջաբանը՝

«Մեր լուսաբնակ նախնիք, բազում դարերու հերոսական մաքառումներով և բազում սերունդներու ստեղծարար ճիգերով, մեզի թողուցին նվիրական ժառանգություն մը, գերագույն սրբություն մը, տասնևվեց դարեր շարունակ պաշտպանված ու պահպանված՝ ամբողջ, անբաժան ու անաղարտ: Այդ մեր սուրբ եկեղեցին է՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցին, հաստատված Միածնի Իջման տեղին վրա, սուրբ գրական Արարատի ստորոտին, որ եղավ և մնաց, ս. Գրիգոր Լուսավորչի երանելի օրերեն մինչև այսօր՝ գերագույն կեդրոնը մեր եկեղեցվո, գերագույն կեդրոնը հայոց կրոնական և ազգային ոգեկանության, գերագույն երաշխիքը հայ քրիստոնեական հավատքի վավերականության, հայ եկեղեցվո միության և հայ հավատացյալ ժողովուրդի ազգային միասնության:

Արդ, մենք այսօրվաններս, պիտի չկարողանա՞նք զայն պաշտպանել ու պահպանել, այնպես, ինչպես մեր նախնիք զայն հանձնեցին մեզի:

Մենք կմնանք լավատես: Այո, կրնանք երբեմն տկարանալ, երբեմն տարակուսիլ, երբեմն շփոթիլ, սակայն վստահ ենք թե մենք բոլորս, մեկ ոգեկան մարմին կազմած, իրավ հավատքով զորացած և ս. Էջմիածնի հազարամյա քարերու խորհուրդով ներշնչված, կարող պիտի ըլլանք խորհիլ, ծրագրել ու գործել ուղիղ ճանապարհով, պղտառատ արդյունքներով»:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա»: